

Ս. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊԵՐԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՂՈՂԻ ՎԱՋԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Խաղողի վաղի ձերատումը՝ դա նրա զարգացման որոշ շրջանում շիվի ծայրի հետացումն է, որի հետևանքով սննդանյութերը շիվերի աճման վրա ծախսվելու փոխարեն տրամադրվում են գեներատիվ օրգաններին:

Ըստ Մերժանյանի, Մելնիկի, Բուզինի, Կիպենի և ուրիշների՝ խաղողի վաղի ձերատման շնորհիվ ավելանում է ծաղկաթիթու թյունների և պտուղների սննդառու թյունը, նվազում է ծաղկաթափը, խոշորանում են պտուղները, ավելանում է հաջորդ տարվա աչքերի մեջ սաղմնավորվող բերքի քանակը: Պտուղը և շիվերը լավ են հասունանում, ավելանում է շաքարի քանակությունը, լավանում է գինու գույնը: Գլխավոր շիվի վրայի տերևները հաստանում են, որի հետևանքով բարձրանում է տերևների ախմիլացիոն ունակությունը: Նպաստավոր պայմաններ են ստեղծվում լուսավորության և օդափոխության համար, կանխվում է հիվանդությունների զարգացումը և հեշտանում է ալգու հետագա խնամքը:

Սակայն խաղողի վաղի ձերատման ազդեցության մասին եզրած կարծիքները հակասական են: Մերժանյանը, Մելնիկը, Բուզինը, Կանտարիան, Բլազոնրավովը, Բոլդարևը և ուրիշները գտնում են, որ ձերատման ազդեցությունը բերքի քանակի և որակի վրա զրական է, իսկ նաումենկոն և Պոդրաժանսկին բացասական կարծիք են արտահայտում:

Այդ տարբեր տեսակետներն արդյունք են այն բանի, որ զրանց հեղինակները ձերատումը կատարել են տարբեր սորտերի վրա, տարբեր միջավայրում, տարբեր ժամկետում և տարբեր մեթոդով:

Ձերատումը լինում է մասնակի և ընդհանուր: Ըստ Ստրելնիկովի, ընդհանուր ձերատումը կատարվում է վաղի բոլոր, իսկ մասնակին՝ միայն պտղատու շիվերի վրա:

Վաղի ձերատման ժամկետները (ծաղկումից առաջ, ծաղկման սկզբին, ծաղկման ժամանակ և ծաղկումից հետո) և բույսից հեռացվող կանաչ մասսայի չափը կարևոր խնդիրներ են և պահանջում են բավական ուշագիր վերաբերմունք:

Ծերատման խորության (վաղից հեռացված կանաչ մասսայի չափի) վերաբերյալ կան տարբեր կարծիքներ:

Բյազոնրավուին առաջարկում է հեռացնել աճման կոնը, Գիպենը՝ շիվի հիմքից հաշված 15—16 հանգույց բարձր, Դյուրանը, Կորոտկովը, Սավենկոն՝ շալկերային այգիներում շալկերի երրորդ լարին, իսկ հենակային սխտեմով մշակվող այգիներում՝ հենակներին հավասար:

Պրոֆեսոր Մերժանյանը իրավացիորեն լարերի և հենակների բարձրությունը ձերատելը ճիշտ չի համարում՝ պատճառաբանելով, որ դրանց բարձրությունը ամեն տեղ միատեսակ չէ և, բացի դրանից, պետք է հաշվի առնել նաև խաղողի վաղի աճեցողությունը սորոսային հատկանիշների առումով: Բացի սորոսային հատկանիշներից, հաշվի պետք է առնել նաև տվյալ վայրի հողակլիմայական պայմանները:

Հայկական ՍՍՌ հողակլիմայական պայմաններում վերելում նշված հարցերն ուսումնասիրելու համար 1944—1951 թվականներին մեր կողմից դրվել են մի շարք փորձեր Նոյեմբերյանի և Շահումյանի շրջաններում՝ մշակվող խաղողի մի քանի սորտերի վրա: Փորձերի նպատակն է եղել պարզել, 1) ձերատման ժամկետների ու ձերատման խորության ազդեցությունը՝ խաղողի տարբեր սորտերի բերքատվության վրա, 2) ձերատման ազդեցությամբ վաղահաս և միջահաս մի շարք սորտերի խաղողի բճաշվելից բերք ստանալու հնարավորության հարցը:

Դրել ենք չորս փորձ:

Առաջին փորձը դրել ենք 1944—1947 թվականներին Այգեդործություն և գինեգործության ինստիտուտի փորձնական այգում, Վարդապետ Մուսկատ և Ռեքսիթի սորտերի 360 վաղի վրա՝ մեկ վարիանտով: Ամեն մի վարիանտում յուրաքանչյուր սորտից վերցրել ենք 30 վաղ՝ երեք կրկնողություններ:

Ծերատման ժամկետների և խորության ազդեցությունը ճշտելու նպատակով փորձի տակ վերցրած վաղերը ձերատել ենք տարբեր խորությամբ՝ վաղերի դարգացման տարբեր ֆազաներում, հետևյալ սխեմայով.

1) Առանց ձերատման — կոնտրոլ:

2) Մերատում ծաղկման սկզբին, շիվերի աճման կոնի հեռացումով:

3) Մերատում ծաղկման սկզբին, շիվերի վերջին ողկույթից 6—8 տերևից վեր գտնվող մասի հեռացումով:

4) Մերատում շիվերի փայտացման սկզբին, աճման կոնի հեռացումով:

5) Մերատում շիվերի փայտացման վերջին, ողկույթից 6—8 տերևից վեր գտնվող մասի հեռացումով:

6) Առանց ձերատման, շիվերի բուռն աճման շրջանում, հորիզոնական ձևով չպալերի երրորդ լարին կապելը:

Մերատման առաջին փորձի յուրաքանչյուր վարիանտի փորձնական վազերի վրա կատարել ենք բերքի քանակի հաշվառում, շիվերի աճեցողության ու փայտացման գինամիկայի որոշում, ֆենոլոգիական դիտողություններ, ինչպես նաև մեխանիկական և քիմիական անալիզներ:

Փորձնական վազերի բերքի հաշվառումն ըստ տարիներիցույց տվեց (աղյուսակ 1), որ Վարդագույն Մուսկատ և Ռքածիթեյի սորտերի վազերի ձերատումը չպալերային աչգու խիտ նեկարիկների պայմաններում, գրական արդյունք է տալիս այն դեպքում, երբ նա կատարվում է ծաղկման սկզբին, հեռացնելով շիվերի աճման կոնը և վերջին ողկույթից 6—8 տերևից վեր գտնվող մասը: Վաղի զարգացման այս ֆազում կատարած ձերատումը տալիս է, կոնտրոլի համեմատությունում, բերքի հավելում Վարդագույն Մուսկատի մոտ 12—13⁰/₀, Ռքածիթեյի սորտերի մոտ՝ 26—33⁰/₀:

Ավելի ուշ ժամկետում փայտացման սկզբին ձերատելու դեպքում, վազերը, կոնտրոլի համեմատությունում, բերքի հավելում չեն տվել: Այսպես, օրինակ, փայտացման սկզբին աճման կոնի հեռացում կատարելիս նկատվել է բերքի քանակի աննշան բարձրացում՝ Վարդագույն Մուսկատի մոտ 3⁰/₀, Ռքածիթեյի մոտ՝ 6⁰/₀, իսկ վերջին ողկույթից 6—8 տերևից վեր գտնվող մասը հեռացնելիս՝ բերքատվության բարձրացում համարյա չի նկատվել:

Վաղի շիվերը բուռն աճման շրջանում, հորիզոնական ձևով չպալերի երրորդ լարին կապելու դեպքում բերքի հավելումը միջին հաշվով կազմել է Վարդագույն Մուսկատի մոտ 19⁰/₀, Ռքածիթեյի մոտ 21⁰/₀: Բերքատվության բարձրացման ցուցանիշներով՝ այս վարիանտը մոտ է վաղ ժամկետում ձերատած վազերի վարիանտներին:

Մեքատման ազդեցությունը խաղողի վաճառքի վրա
(Հայաստանի միջին տարածքում 1944—1947 թթ.)²

	Վաճառքի Մուկատ				Մեքատմ			
	Բեք				Բեք			
	(միլիոն հեկտար)	(⁰ / ₁₀₀) միլիոն	(⁰ / ₁₀₀) միլիոն	(⁰ / ₁₀₀) միլիոն	(միլիոն հեկտար)	(⁰ / ₁₀₀) միլիոն	(⁰ / ₁₀₀) միլիոն	(⁰ / ₁₀₀) միլիոն
Մեքատման մասին հետաքննված կանաչ մասային չափը	128	100	25,7	6,1	136	100	24,0	5,6
Առանց ծերատման — կանաչ	144	112	26,4	5,6	181	133	23,2	5,4
Մեքատմում ծաղկման սկզբին, չիվերի աճման կոնի հե- ռացումով	153	119	26,1	6,2	172	126	23,6	5,3
Մեքատմում ծաղկման սկզբին, չիվերի վերջին ողկույթից 6-8 տարեկան վերջին մասի հեռացումով	132	103	26,2	6,1	145	106	24,4	5,6
Մեքատմում չիվերի վառարման սկզբին, չիվերի վերջին ողկույթից 6-8 տարեկան վերջին մասի հեռացումով	121	100	26,0	6,2	134	98	23,4	5,2
Առանց ծերատման, չիվերի բուն աճման շրջանում հո- րեղման ծաղկման ծաղկման 3-րդ տարեկան հեռացումով	153	119	26,4	7,1	165	121	23,4	5,3

² Աղյուսակում բերված թվերը ցույց են տալիս չափազանց և անախտիկ ծաղկման և անախտիկ ծաղկման

Անալիզի արդյունքները ցույց տվեցին, որ ձերատուժը քաղաքարար չի անդրադառնում բերքի որակի վրա: Այս հանգամանքը ցայտուն կերպով երևում է վերոհիշյալ աղյուսակում բերած տվյալներից:

Ծերատման 2-րդ փորձը դրել ենք 1949 թվականին Նոյեմբերյանի չրջանի Շամպայն կոմբինատի Նոյեմբերյանի սովխոզում (Ռքածիթելի և Ալիգոտե 2,16 հեկտար), ինչպես և Ղալաչայի (Ռքածիթելի 0,72 հ) և Կոզրի (Ռքածիթելի 1,08 հ) կոլտնտեսություններում: Ամեն մի վարիանտում ունեցել ենք երեք կրկնօգտություն, որի համար վերցրել ենք Նոյեմբերյանի սովխոզում ու Կոզրի կոլտնտեսությունում՝ 720-ական վաղ և Ղալաչայի կոլտնտեսությունում 480 վաղ:

Փորձնական վազերի 1/5 մասն է ենթարկվել անհատական հաշվառման: Այսպես, Նոյեմբերյանի սովխոզում Ռքածիթելի և Ալիգոտե սորտերի 8640 վազից հաշվառման է ենթարկվել 1728, Ղալաչայի կոլտնտեսությունում Ռքածիթելի սորտի 2880 վազից՝ 576 և Կոզրի կոլտնտեսությունում Ռքածիթելի սորտի 4320 վազից՝ 864, բայց բերքահավաքի ժամանակ փորձնական բոլոր վազերի փաստացի բերքը հաշվառման է ենթարկվել (աղյուսակ 2):

Այս փորձի արդյունքները ևս նման են նախորդ փորձի արդյունքներին, ծաղկման սկզբին կատարած ձերատուժը տվեց 14,3—27,9⁰/₁₀ բերքի հավելում, պահպանելով սորտին հատուկ որակը:

Միաժամանակ պարզվեց, որ վաղ ժամկետում կատարած ձերատման հետևանքով Նոյեմբերյանի սովխոզում Ռքածիթելի սորտի վազերի բճաշվերի վրա առաջանում են զգալի քանակությամբ ողկույղներ, որոնք հասունանում են և դառնում պիտանի՝ օգտագործման համար:

Ծերատման այս երկու փորձերը զրված են եղել չպալերային ալգու պայմաններում: Բայց, ջանի որ Հայաստանում դեռ մշակութային մեծ թմբային սիստեմի մեծ մասսիվներ կան, անհրաժեշտ համարեցինք պարզել ձերատման ազդեցությունը նաև թմբային ալգու պայմաններում: Այդ նպատակով, ձերատման երրորդ փորձը դրեցինք 1950—1951 թվականներին Ոսկենատ, Կախեթ, Ռքածիթելի, Սպիտակ Արաքսների և Դեղին Երևանի սորտերի 840 վազի վրա՝ երեք կրկնօգտությամբ, 7 վարիանտով: Ամեն մի վարիանտում վերցված է եղել Ոսկենատ, Կախեթ և Ռքածիթելի սորտերից 30-ական վաղ, իսկ Սպիտակ Արաքսների և Դեղին Երևանի սորտերից՝ 15-ական վաղ:

Ծերատման ազդեցությունը խաղողի
(շաղկերախն ալյում,

Ծերատման ժամկետները և վաղից հեռացված կանաչ մասնայի շափը	Նոյեմբերյանի				
	Աղիգահ				Ռջա
	բերքը		22/IX		բեր-
	հեղատրից (ցննանք)	կոնսերվի հա- մեմատում բյուր (0/0)	շափաղ (0/0)	ախտից բերված (0/0)	հեղատրից (ցննանք)
Առանց ծերատման—կոնսերվ	172	100,0	20,5	10,0	180
Ծերատում ծաղկման սկզբին, շիվերի աճ- ման կոնի հեռացումով	220	127,9	22,3	7,8	228
Ծերատում ծաղկման սկզբին, շիվերի վերջին ողկույթից 6—8 տերևից վեր դանվող մասի հեռացումով	208	120,9	22,2	8,0	220
Ծերատում շիվերի փայտացման սկզբին աճման կոնի հեռացումով	172	100,0	21,2	7,8	180
Ծերատում շիվերի փայտացման սկզբին, վերջին ողկույթից 6—8 տերևից վեր դանվող մասի հեռացումով	158	97,6	20,2	7,8	180
Առանց ծերատման, շիվերի բուռն աճ- ման շրջանում հորիզոնական ձևով շաղկերի 3-րդ լարին կապելը	216	125,5	21,2	9,0	192

Ծերատումը կատարեցինք բույսի զարգացման վաղ ֆա-
զերում հետևյալ սխեմայով՝

- 1) առանց ծերատման—կոնսերվ,
- 2) ծերատում ծաղկման սկզբին, շիվերի աճման կոնի հե-
ռացումով,
- 3) ծերատում ծաղկման սկզբին, շիվերի վերջին ողկույթից
6—8 տերևից վեր դանվող մասի հեռացումով,
- 4) ծերատում մասնայական ծաղկման ժամանակ՝ շիվերի
աճման կոնի հեռացումով,
- 5) ծերատում մասնայական ծաղկման ժամանակ՝ շիվերի
վերջին ողկույթից 6—8 տերևից վեր դանվող մասի հեռա-
ցումով,

Ա զ յ ու ս ա կ 2

վաղի բերքատվության վրա
(1949 թ.)

տվյալ			Ղալաշայի Ստալինի անվ. կոլտնտեսության			Կողբի Զափարիձեի անվ. կոլտնտեսության					
ժիթելի			Մ Ե ա թ ի թ է ի								
բը		22/IX	բերքը		24/IX	բերքը		26/IX			
կոնսերվի հա- մեմատու- թյամբ (°/o)	շաբաթը (°/o)	տվյալից թվով (°/o)	հետադի (ցանանք)	կոնսերվի հա- մեմատու- թյամբ (°/o)	շաբաթը (°/o)	տվյալից թվով (°/o)	հետադի (ցանանք)	կոնսերվի հա- մեմատու- թյամբ (°/o)	շաբաթը (°/o)	տվյալից թվով (°/o)	
100,0	20,2	11,4	76	100,0	21,9	10,6	56	100,0	21,0	11,9	
126,6	21,2	10,5	93	126,3	22,3	9,0	64	114,3	19,6	13,9	
122,2	21,2	10,2	92	121,0	22,2	9,2	68	121,4	20,2	14,0	
100,0	20,2	10,6	76	100,0	22,0	9,4	52	92,8	19,6	13,9	
100,0	21,2	10,2	72	94,7	22,0	9,4	52	92,8	18,8	14,4	
105,0	21,2	10,2	80	105,3	21,2	9,5	56	100,0	20,0	13,1	

6) ձերատում ծաղկումից հետո՝ չիվերի անման կոնի հե-
ռացումով:

7) ձերատում ծաղկումից հետո չիվերի վերջին ողկույթից
6—8 տերևից վեր դանդող մասի հեռացումով:

Փոքիների տվյալները (տղյուսակ 3) ցույց են տալիս, որ թմբա-
յին այգու պայմաններում 1950 թվականին Ոսկենատ, Կախեթ
և Ռքածիլիի սորտերի վրա ծաղկման սկզբին և մասսայական
ծաղկման ժամանակ կատարած ձերատումը տվել է կոնսերվի
համեմատությամբ 10—29% բերքի հավելում:

Նույն պայմաններում սպիտակ Արաքսանի, Կախեթ և Դե-
լին Երևանի վաղերի ձերատման դեպքում բճաշվերի վրա
ստաճանում են զգալի քանակությամբ ողկույթներ: Այդ պատ-

Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը
(1928-1930 թթ.)

	Ուղեհան		Կախիք		Ռեզուլթիվ	
	Բերք	28 IX	Բերք	24 IX	Բերք	27 IX
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական
	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական
	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական	(⁰⁰ / ₀) միավոր արտադրության համեմատական
Արդյունաբերություն—հանքեր	181	25,1	100	25,4	70	27,4
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	221	25,1	110	26,0	83	25,9
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	229	25,0	113	25,5	90	25,9
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	232	24,8	113	25,5	80	27,1
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	217	24,6	110	25,7	77	26,7
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	176	23,4	103	26,1	60	26,6
Մեքսիկայի արդյունաբերության զարգացումը (1928-1930 թթ.)	157	24,8	97	27,0	83	27,9

Սպիտակ Արարոսենու ծերատված վաղեմի բերքը (1930 թ.)

	Հիմնական բերքը				Բնագործի բերքը		
	Հեկտար (ցեստ.)	Կոնսերվի համեմատ բյուր (%)	1930		Հեկտար բերք (ցեստ.)	Հարկ (%)	Երկրորդ բերք (%)
			Հարկ (%)	Երկրորդ բերք (%)			
Ծերատված մամուլեռները և վաղեմ հեռացված կանաչ մասայի չափը							
Առանց ծերատված—կոնսերվ	87	100	15,6	8,4	4	25,9	4,4
Ծերատված ծաղկման սկզբին, չիվերի աման կոնի հեռացումով	102	117	15,6	8,4	33	25,7	4,8
Ծերատված ծաղկման սկզբին, չիվերի վերջին ողկույթից 6-8 տերևից վեր գանձող մասի հեռացումով	116	133	15,5	8,4	53	24,8	4,6
Ծերատված մասսայական ծաղկման մամանակ, չիվերի աման կոնի հեռացումով	120	138	18,0	7,2	36	24,7	4,4
Ծերատված մասսայական ծաղկման մամանակ, չիվերի վերջին ողկույթից 6-8 տերևից վեր գանձող մասի հեռացումով	111	127	17,0	7,8	37	25,8	4,4
Ծերատված ծաղկումից հետո, չիվերի աման կոնի հեռացումով	98	113	16,7	7,9	7	25,7	3,8
Ծերատված ծաղկումից հետո, չիվերի վերջին ողկույթից 6-8 տերևից վեր գանձող մասի հեռացումով	98	113	15,9	8,4	13	25,3	3,7

Մեքարտված վազերի բնաշխարհը (1881 թ.)

	Մեքարտված վազերի բնաշխարհը				Գեղերի քանակ			
	միտո- նիստ վեր- նիստ	(ն) միտո- նիստ վեր- նիստ	(ն) միտո- նիստ վեր- նիստ	(ն) միտո- նիստ վեր- նիստ	միտո- նիստ վեր- նիստ	(ն) միտո- նիստ վեր- նիստ	(ն) միտո- նիստ վեր- նիստ	միտո- նիստ վեր- նիստ
	22/1X	(0/0) միտո- նիստ	(0/0) միտո- նիստ	(0/0) միտո- նիստ	(0/0) միտո- նիստ	(0/0) միտո- նիստ	(0/0) միտո- նիստ	(0/0) միտո- նիստ
Մեքարտված վազերի բնաշխարհը	2	80	4	25,4	4,5	23,0	5,2	5,2
Մեքարտված վազերի բնաշխարհը	28	77	49	28,0	4,2	22,2	5,5	5,5
Մեքարտված վազերի բնաշխարհը	32	80	58	28,0	4,2	23,0	5,4	5,4
Մեքարտված վազերի բնաշխարհը	9	93	18	28,0	3,3	23,0	5,1	5,1
Մեքարտված վազերի բնաշխարհը	10	96	22	25,0	4,5	22,2	5,3	5,3
Մեքարտված վազերի բնաշխարհը	3	100	7	26,0	3,7	23,0	4,9	4,9
Մեքարտված վազերի բնաշխարհը	4	138	13	26,0	3,7	23,0	5,6	5,6

Առանց ծերատման—կոնսերվ

Մեքարտված վազերի բնաշխարհը, չեղեքի աճման կոն-
սերվ

Մեքարտված վազերի բնաշխարհը, չեղեքի աճման կոն-
սերվ 6—8 տարեկան վազերի աճման կոն-
սերվ

Մեքարտված վազերի բնաշխարհը, չեղեքի աճման կոն-
սերվ 6—8 տարեկան վազերի աճման կոն-
սերվ

Մեքարտված վազերի բնաշխարհը, չեղեքի աճման կոն-
սերվ 6—8 տարեկան վազերի աճման կոն-
սերվ

Մեքարտված վազերի բնաշխարհը, չեղեքի աճման կոն-
սերվ 6—8 տարեկան վազերի աճման կոն-
սերվ

Մեքարտված վազերի բնաշխարհը, չեղեքի աճման կոն-
սերվ 6—8 տարեկան վազերի աճման կոն-
սերվ

հասով անհրաժեշտ համարեցինք վերոհիշյալ սորտերի վրա առաջացած հիմնական բերքից դատ հաշվի առնել նաև բճաշվելից առաջացած բերքը (աղյուսակ 4):

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Սպիտակ Արաքսենու վրա ծաղկման սկզբին կատարած ձերատումը բճաշվելի վրա տվել է 33—53 ցենտներ հալիլյալ բերք, մասնաշաղկան ծաղկման շրջանում՝ 36—37. իսկ ծաղկումից հետո՝ 7—13 ցենտներ:

1951 թվականին ձերատման երկրորդ տարում, չեն վաղ ձերատման հետևանքով Սպիտակ Արաքսենին տվեց 18—58 և Դեղին Երևանին 24 ցենտներ բճաշվային բերք, իսկ ծաղկումից հետո կատարած ձերատումը նույն սորտերի մոտ բերքը բարձրացրել է 4—13 ցենտներ (աղյուսակ 5):

Այսպիսով, 1950—1951 թվականներին կատարած փորձերի արդյունքներից պարզվեց, որ բճաշվելից ստացված բերքը, բոլոր սորտերի, մեկ հեկտարից կազմում է մինչև 50 ցենտներ:

1951 թվականի գարնանը, ապրիլի 27-ին տեղի ունեցած կարկտահարման կապակցությամբ ինստիտուտի ագրոտեխնիկայի բաժինն ուսումնասիրեց կարկտահարությունից վնասված վաղերի բճաշվելից բերք ստանալու հարցը:

Այդ նպատակով շաղկերային այգում դրվեց ձերատման չորրորդ փորձը՝ Սպիտակ Արաքսենի, Սև Արաքսենի, Դեղին Երևանի, Մանիշակաղույն Մուսկատ, Մափերավի, Կաբերնե և Ամբարի 210 վաղի վրա:

Այս փորձի ժամանակ յուրաքանչյուր սորտից վերցրել ենք 15 վաղ՝ երեք կրկնողությամբ: Նույն քանակի վաղեր թողել ենք առանց ձերատման, որպես կոնտրոլ:

Ծերատումը կատարել ենք ծաղկումից 10—15 օր առաջ, հետացնելով շիվերի աճման կոնք:

Տվյալները (աղյուսակ 6) ցույց են տալիս, որ Սպիտակ Արաքսենին, Դեղին Երևանին և Մափերավին ձերատման հետևանքով, կոնտրոլ վաղերի համեմատությամբ, հիմնական բերքը ավելացրել են ամեն մեկը 12 ցենտներով հեկտարին: Մանիշակաղույն Մուսկատն ու Կաբերնեն նույն ձերատման միջոցով հիմնական բերքը չեն ավելացրել. ձերատածները տվել են նույնքան, ինչքան կոնտրոլի վաղերը: Ամբարին և Սև Արաքսենին հիմնական բերքը, ընդհակառակը, պակասեցրել են:

Ինչ վերաբերում է ծերատման ազդեցությանը բճաշվային բերքի կազմակերպմանը, պետք է ասել, որ փորձարկված բոլոր սորտերն էլ կոնտրոլի համեմատությանը զգալիորեն շատ բերք են կազմակերպել: Մափերավին և Սև Արաքսենին կոնտրոլում բճաշվային բերք ամենևին չեն տվել, իսկ ծերատածները համապատասխանորեն տվել են 28 և 72 ցենտներ հեկտարին: Սպիտակ Արաքսենին տվել է կոնտրոլում՝ 24, ծերատածում՝ 124 ց, Դեղին Երևանին 8 ցենտների դիմաց 44, Մանիշակագույն Մուսկատը 4 ց դիմաց 8 ց և այլն:

Մերատման մեր բոլոր փորձերը զրվել են նորմալ ագրոտեխնիկական պայմաններում և բոլոր վարիանտների վաղերին արվել է նույն խնամքը, և ահա այդպիսի պայմաններում կատարած մեր փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ վաղի պարզացման որոշ ֆազայում և որոշ խորություններ ծերատելու դեպքում ստացվում է բերքատվության բարձրացման համարյա նույն պատկերը, այսինքն՝ թե՛ շաղկերային և թե՛ թմբային տնկարկների պայմաններում վաղ ժամկետում ծերատելու դեպքումն է, որ բերքի տվելի շատ բարձրացում է ստացվում:

Բերքատվության բարձրացումը վաղը վաղ ժամկետում ծերատելու դեպքում կարելի է բացատրել նրանով, որ աճող մասը — աճման կոնը — հեռացնելուց՝ սննդանյութերի մեծ մասը ուղղվում է ծաղկավիթթուլթուլների մեջ և նպաստում նրանց տվելի լավ սնմանը:

Մեր փորձերում ուշ ժամկետում կատարած ծերատման բացասական արդյունքները պետք է բացատրել նրանով, որ շիվերից հեռացվում են մեծ թվով միջնանդույցներ, հասուն՝ ասիմիլացիա կատարող տերևներով, որոնց հեռացնելը թուլացնում է վաղը և որոշ չափով իջեցնում բերքի քանակը:

Վաղի շիվերը հորիզոնական ձևով շաղկերի երրորդ լարին կապելիս, նրանց կորացնելու հետևանքով, ստեղծվում է աղեղ, որը արգելալում է սննդանյութերի հոսքը դեպի աճման կոնը, ուղղելով նրանց դեպի կողային օրգանները, նույն թվում նաև դեպի ծաղկավիթթուլթուլյունները, որի հետևանքով և բարձրանում է բերքը:

Գրականության տվյալները և մեր փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ վաղ ժամկետում կատարած ծերատման հետևանքով, համապատասխան ագրոտեխնիկայի պայմաններում,

կարելի է մի շարք սորտերի բճաշվերից ստանալ լրացուցիչ բերք:

Մեր փորձերի արդյունքները ցույց են տալիս նաև, որ ձերատման հետևանքով, վաղի բերքատվության բարձրացման հետ միասին, չի բնկնում ձերատած վաղերից ստացած բերքի որակը:

Նույնաման տվյալներ են ստացել նաև ուրիշ հետազոտողներ: 1951—1954 թվականներին Հայկական ՍՍՌ Շահումյանի և Նոյեմբերյանի շրջաններում կատարած ձերատման մեր փորձերի արդյունքներից կարող ենք անել հետևյալ եզրակացությունները:

Հայկական ՍՍՌ Շահումյանի շրջանի շալվերային այգու պայմաններում ձերատումը ծաղկման սկզբին կատարելիս տվել է բերքի հավելում (Վարդապույն Մուսկատը՝ 12—13⁰/₀, Ռքածիթելին՝ 26—33⁰/₀)։ Այդ ժամկետում կատարած ձերատումը ապահովել է սորտին հատուկ որակական հատկությունները, շիվերի նորմալ աճը և փայտացումը:

Լավ արդյունք է ստացվել նաև շիվերը հորիզոնական դիրքով շալվերի երրորդ լարին կապելու դեպքում. ստացված բերքն իր որակով և քանակով համարյա հետ չի եղել ծաղկման սկզբին կատարած ձերատման արդյունքներից:

Հայկական ՍՍՌ Նոյեմբերյանի շրջանի շալվերային այգու պայմաններում Ռքածիթելիի և Ալիգոտեի բերքատվությունը բարձրացել է ծաղկման սկզբին կատարած ձերատման հետևանքով, երբ հեռացվել են շիվի աճման կոնը կամ ողկույզից վեցից ութ տերևից վեր գտնվող մասը: Այդ պայմաններում բերքի հավելումը կազմել է 14,3—27,9⁰/₀:

Նոյեմբերյանի սովխոզում վաղ ժամկետում կատարած ձերատման հետևանքով Ռքածիթելիի բճաշվերի վրա առաջացել են զգալի քանակությամբ ողկույզներ, որոնք լրիվ հասունացել են ու օգտագործման համար դառել պիտանի:

Հայկական ՍՍՌ Շահումյանի շրջանի թմրային այգու պայմաններում Ոսկեհատի, Կախեթի, Ռքածիթելիի, Սպիտակ Արաքսենիի և Դեղին Երևանիի, բերքատվությունը բարձրացել է ծաղկման սկզբին և ծաղկման ժամանակ կատարած ձերատման հետևանքով, երբ հեռացրել են աճման կոնը, կամ վերջին ողկույզից 6—8 տերևից վեր գտնվող մասը: Այդ պայմաններում բճաշվերի վրա առաջացած բերքը մեկ հեկտարից կազմել է,

քստ սորտերի, մինչև 58 ց և հիմնականում պահպանել է սորտին հատուկ որակը:

Կարելի է կոտհել, որ վաղ ժամկետում կատարած ձերա-տումը՝ բճաշվերից բերք ստանալու տեսակետից՝ դրական կլի-նի նաև այլ վաղահաս սորտերի մոտ:

Շահումյանի շրջանում շաղկերային այգու պայմաններում Սալիտակ Արաքսենի, Սափերավի, Սև Արաքսենի, Դեղին Երեանի, Մանիշակագույն Մուսկատի, Կարենեի և Ամբարի բերքատվությունը վաղ զարնանային կարկտահարությունից հետո վերականգնվել է ծաղկումից 10—15 օր առաջ կատարած ձերատման հետևանքով, երբ հեռացրել են միայն չիվի աճման կոնը: Այս պայմաններում բճաշվային բերքը մեկ հեկտարից կազմել է, քստ սորտերի, մինչև 124 ց հետևեր:

Հիմնվելով վերոհիշյալի վրա, կարելի է արտադրությունը հանձնարարել Հայկական ՍՍՌ այգիների բերքատվությունը բարձրացնելու նպատակով, ծաղկման սկզբին և ծաղկման ըն-թացքում, ձերատում կատարել աճման կոնը, կամ վերջին ող-կույդից վեցից ութ տերևից վերը դանդող մասը հեռացնելու մի-ջոցով, ինչպես և վաղ զարնանային կարկտահարությունից հե-տո, բերքատվությունը վերականգնելու համար, նույն ձևի ձե-րատում կատարել ծաղկումից 10—15 օր առաջ:

С. М. Мурадян

Значение чеканки в деле повышения урожайности виноградной лозы

Резюме

В условиях Армянской ССР, при культуре винограда на шпалерах, применяется прищипывание, однако, наиболее целесообразные сроки и степень (высота) чеканки до сих пор еще не были установлены.

С 1944 по 1951 гг. нами проводились опыты по прищипыванию виноградной лозы с целью:

1. Изучения влияния глубины прищипывания на повышение урожайности некоторых сортов винограда.

2. Определения наилучших сроков прищипывания.

3. Выяснения возможности получения при помощи прищипывания дополнительного урожая у ряда раннеспелых сортов винограда.

На основании опытов 1944—1951 гг., по изучению влияния прищипывания на некоторые сорта винограда в Ноемберянском и Шаумянском районах Армянской ССР в условиях шпалерной и тумбовой систем виноградников, можно сделать следующие выводы:

1. В Шаумянском районе Армянской ССР, в условиях шпалерного виноградника, прищипывание побегов до цветения увеличивает урожай (у сорта Мускат розовый на 12—19%, у сорта Ркацители на 26—33%).

2. Хорошие результаты получаются также без прищипывания при горизонтальном подвязывании побегов к третьей проволоке. По качеству и количеству полученного урожая этот способ приравнивается к прищипыванию раннего срока.

3. С целью повышения урожайности сортов Ркацители и Алиготе, в условиях Ноемберянского района, прищипывание следует проводить в начале цветения с удалением только точки роста или верхней части побегов, но не ниже 6—8 листьев, расположенных над гроздью. Проведенное в этот срок прищипывание в наших опытах дало повышение урожая 14,3—27,9%.

4. В результате раннего проведения прищипывания на сорте Ркацители в Ноемберянском совхозе Шампан-комбината на пасынках образовалось значительное количество гроздей, которые нормально созрели.

5. С целью повышения урожайности сортов Ркацители, Кахет, Араксени Спитак и Воскеат в тумбовых виноградниках Шаумянского района, прищипывание следует проводить в начале цветения или в период цветения.

6. Для получения пасынкового добавочного урожая у сортов Араксени Спитак, Кахет и Еревани Дегин в тумбовом винограднике прищипывание побегов следует проводить в начале цветения.

В результате проведения прищипывания в этот срок

образовавшийся дополнительный урожай на пасынках с гектара по отдельным сортам достигал до 58 ц/га.

7. При проведении раннего прищипывания, с целью получения дополнительного урожая, лучший результат получен у сорта Араксени Спитак, добавочный урожай на кустах которого составил 33—58 ц/га.

8. Под влиянием прищипывания возможно получить пасыковый урожай также на раннеспелых сортах.

9. В Шаумянском районе урожай винограда сортов Араксени Спитак, Араксени Сев, Еревани дегин, Мускат фиолетовый, Саперави, Каберне и Амбари на виноградниках, поврежденных градом в ранневесеннее время, был восстановлен в результате прищипывания, проведенного за 10—15 дней до цветения, путем удаления только точки роста побегов. В наших опытах дополнительный урожай на пасынках с гектара по отдельным сортам достигал до 124 ц/га.

ЛИТЕРАТУРА

1. Айвазян П. К. Повышение урожайности винограда на Украине сорта Пино серый и Шардоне. Виноделие и виноградарство СССР, 11, стр. 41, 1951.
2. Барберон Г. А. Значение листьев в культуре винограда и применение способов зеленой обрезки. Вестник Виноделия, 11, стр. 660 и 12, стр. 717, Одесса, 1906.
3. Баширов Ф. Б. Использование пасынков при обрезке виноградных кустов. Виноделие и виноградарство СССР, 6, стр. 32—35, 1947.
4. Баширов Ф. Б. К изучению биологии виноградной лозы. Виноделие и виноградарство СССР, 5, стр. 15—33, 1949.
5. Бузин Н. П. и Кантария Б. И. Влияние зеленой обрезки на уменьшение осыпания цветов и ягод и повышение урожайности винограда. Труды ЗИВиВ, вып. 1936.
6. Бузин Н. П. Способы борьбы с осыпанием цветов и ягод у винограда. Крымиздат, 1949.
7. Бузин Н. П. Осыпание цветков и завязей у виноградной лозы и способы борьбы с ним. стр. 103, Москва, 1951.
8. Кондо И. Н. Виноградники Ташкентского оазиса после майских заморозков. Виноделие и виноградарство СССР, 8, стр. 23, 1948.
9. Кондо И. Н. Роль пасынков в ускоренном восстановлении виноградных кустов. Агробиология, 7, стр. 109—117, 1950.
10. Кондо И. Н. Правильно использовать пасынки. Виноделие и виноградарство СССР, 4, стр. 29, 1951.

11. Макаров-Кожухов Л. Н. О роли пасынков виноградной лозы. Вестник виноградарства, виноделия и виноторговли СССР, 2, стр. 111—117, Одесса, 1930.
12. Мельник С. А. Влияние зеленой обрезки на виноградные кусты и на качество их урожая. Вестник Виноделия Украины, 1, стр. 34—42, Одесса, 1926.
13. Мержаниан А. С. и Болгарев П. Т. Виноградарство. Сельхозгиз, М—Л., 1933.
14. Науменко Н. П. и Подражанский А. Л. Чеканка виноградного куста. Труды Укр. Н/и института виноградарства им. К. А. Тимирязева, вып. 2, Харьков, 1935.
15. Плакида Е. К. Урожай винограда с пасынков прошлого года. Виноделие и виноградарство СССР, 4, стр. 22, 1950.
16. Стрельников И. Г. Влияние пасынков на формирование соцветий в зимующих почках. Виноделие и виноградарство СССР, 11, стр. 36 1951.
17. Стрельников И. Г. Влияние пасынков на плодородность почек виноградной лозы. Виноделие и виноградарство СССР, 10, стр. 41, 1950.
18. Турянский Г. Ф. Плодородность почек виноградной лозы. Виноделие и виноградарство СССР, 4, стр. 23, 1950.
19. Цейтлин М. Г. К вопросу о получении урожая на пасынках. Виноделие и виноградарство СССР, 10, стр. 19, 1949.